ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

«03» հոկտեմբեր 2019թ. ք. Երևան, Ս. Դավթի 87ա

ՈՐՈՇՈՒՄ №. 1163/01-Ա

Չկատարված հարկային պարտավորությունները գանձելու մասին

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետի ժ/պ Նաիրա Ավանեսյանս քննարկելով «ԿՈՒԼԼԱՆՏ» ՍՊԸ-ի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտի տվյալների «ԿՈՒԼԼԱՆՏ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00144436, հասցե՝ ք. Երևան, ՄՈԼԴՈՎԱԿԱՆ Փ., 50/5 8, գրանցման համար՝ 264.110.863586) նկատմամբ 10.06.2019թ-ին հարուցված վարչական վարույթի շրջանակներում գանձման ենթակա պարտավորությունը կազմում է 648.740 դրամ, որից ապառք՝ 329.384 դրամ, տույժ՝ 316.806 դրամ, տուգանք՝ 2.550 դրամ:

Վերոհիշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, հարուցվել է վարչական վարույթ չկատարված պարտավորությունը գանձելու վերաբերյալ՝ վարչական ակտ ընդունելու նպատակով, որի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի տվել:

Արդյունքում սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված հարկային պարտավորությունը կազմում է **648.740** դրամ, այդ թվում՝

եկամտային հարկի գծով պարտավորությունը կազմում է 299.845 դրամ, որից ապառք՝ 181.359 դրամ, տույժ՝ 115.936 դրամ, տուգանք՝ 2.550 դրամ, որն առաջացել է 2017 թվականի հունվար-օգոստոս, 2018 թվականի դեկտեմբեր ամիսների եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկներից, ինչպես նաև մինչև 01.01.2018 թվականը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 24-րդ, իսկ 01.01.2018 թվականից հետո ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածների համաձայն հաշվարկված տույժերից և տուգանքներից,

շրջանառության հարկի գծով պարտավորությունը կազմում է 179.130 դրամ, որից ապառք՝ 24.394 դրամ, տույժ՝ 154.736 դրամ, որն առաջացել է 2016 թվականի 4-րդ եռամսյակի հաշվարկից, ինչպես նաև ինչև 01.01.2018 թվականը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ , իսկ 01.01.2018 թվականից հետո ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածների համաձայն հաշվարկված տույժերից,

շահութահարկի գծով պարտավորությունը կազմում է 169.765 դրամ, որից ապառք՝ 123.631 դրամ, տույժ՝ 46.134 դրամ, որն առաջացել է 2016 թվականի տարեկան հաշվարկից, 2017 թվականի 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակների կանխավճարներից, ինչպես նաև մինչև 01.01.2018

թվականը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, իսկ 01.01.2018 թվականից հետո ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածների համաձայն հաշվարկված տույժերից:

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր, որոնք ենթակա են կատարման մինչև սույն որոշման կատարման օրը՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հետ միասին:

Համաձայն <<**Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին**>> ՀՀ օրենքի՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրը հարկային եկամուտներն ու պետական տուրքերն են, որոնց հավաքագրման շնորհիվ են կատարվում նույն օրենքով նախատեսված հանրային, պաշտպանության, հասարակական, անվտանգության, դատական գործունեության և այլ ոլորտներում նախատեսված ծախսերը: Նշվածից ելնելով և հաշվի առնելով պարտավորությունների գանձման կարևորագույն հանրային նշանակությունը՝ **սույն որոշումը ենթակա է անհապաղ կատարման**:

Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորությունների վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 64-րդ, 66-րդ կետերով, 398-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով, <<Հարկային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 9-րդ մասով և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «ԿՈԼԼԱՆՏ» ՍՊԸ-ից գանձել **648.740** դրամ պարտավորության գումար:
2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ապահովող ծառայություն:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել հարկ վճարողին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն հարկ վճարողի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու օրվան հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ Ժ/Պ **Ն. ԱՎԱՆԵՍՅԱՆ**

Կատարող՝ Գ. Թադևոսյան
ԻՎ ՀԳ և ՊԿԱ բաժին
Հեռ. 011-54-91-91/9147/